



ԱՐՅԱԽԻ
ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



«ԱՐՅԱԽ»
ԳԻՏԱՆԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 2(5), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը պետք է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒՉՂԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴՎՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻՉԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարել ԺԵՅԱՌ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլտին, Լեհաստան**)

Նատայա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱՎՈՔՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 2(5), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 272 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 2-րդ (5-րդ) համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսը, Դոնեցկի ժողովրդական Հանրապետությունը, Չինաստանը և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող մոտ երեք տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN**, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain**)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)
Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine**)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

Scientific Artsakh, № 2(5), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 272 pages.

The second (5th) issue of «Scientific Artsakh» journal 2020 comprises the scientific works of approximately 30 prominent and young scientists from Armenia, Artsakh, Belarus, China, Donetsk People's Republic and Russia on the topical issues of social sciences.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 2(5), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 272 страницы.

Во втором (5-ом) номере 2020 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы около 30 выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Беларуси, Донецкой Народной Республики, Китая и России, в которых исследуются актуальные вопросы общественных наук.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Գիտության դիվանագիտության զարգացման հեռանկարներն Արցախի Հանրապետությունում.....9

EDITORIAL. Prospects for the Development of Science Diplomacy in the Republic of Artsakh.....12

РЕДАКЦИОННАЯ СТАТЬЯ. Перспективы развития дипломатии науки в Республике Арцах.....14

ԲԱՂԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ

Մարտուն Ազատյան. Արցախին հատկացվող ամերիկյան օգնության ռազմավարության փոխակերպումը Post-Covid դարաշրջանի տնտեսական նոր քաղաքականության համատեքստում..... 17

Martun Azatyan. Transformation of the Strategy of American Aid to Artsakh in the Context of the New Economic Policy of the Post-Covid Era

Мартун Азатян. Трансформация стратегии американской помощи Арцаху в контексте новой экономической политики эры Post-Covid

Անի Գրիգորյան. Հակամարտությունների կարգավորման տիպաբանությունն ըստ Փ.Վալենսթեյնի. Լեռնային Ղարաբաղի հակամարտության օրինակը.....24

Ani Grigoryan. Conflict Resolution Typology According to P.Wallensteen: The Case of Nagorno-Karabakh Conflict

Ани Григорян. Типология урегулирования конфликтов по П.Валенстайну. Пример нагорно-карабахского конфликта

Մարտին Թովմասյան. ԳԴՅ դիրքորոշումը Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ (1991-2008 թթ.).....34

Martin Tovmasyan. Germany's Position on Nagorno-Karabakh Conflict in 1991-2008

Мартин Товмасын. Позиция Германии по нагорно-карабахскому конфликту в 1991-2008 гг.

Սոֆյա Օհանյան. Արցախի մշակութային դիվանագիտության անհրաժեշտությունը՝ որպես երկրի միջազգային ճանաչման եղանակ.....45

Sofya Ohanyan. The Necessity of Cultural Diplomacy of Artsakh as a Way of Country's International Recognition

Софья Оганян. Культурная дипломатия Арцаха как способ международного признания страны

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Մարիամ Գրիգորյան. Մարդու իրավունքների պաշտպանության սահմանափակման միջազգային իրավական կարգավորումները չճանաչված պետությունների միջազգային իրավասուբյեկտայնության հիմնախնդրի համատեքստում.....58

Mariam Grigoryan. International Legal Regulations to Resrictions on the Protection of Human Rights in the Context of the Problem of International Personality of Unrecognized States

Мариам Григорян. Международные правовые регулирования ограничения защиты прав человека в контексте проблемы международной правосубъектности непризнанных государств

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) գործունեության մեջ առանցքային տեղ ու դեր ունի գիտության դիվանագիտությունը, և պատահական չէ, որ հենց Կազմակերպության հետևողական ջանքերի շնորհիվ է արցախյան հասարակական ու գիտակրթական կյանքում շրջանառության մեջ դրվել «գիտության դիվանագիտություն» հասկացությունը: Վերջինիս գործիքակազմն արհեստավարժորեն կիրառվել է կազմակերպության գրեթե բոլոր նախագծերում ու ծրագրերում՝ նպաստելու Արցախում գիտության զարգացմանը, Արցախի ճանաչելիության բարձրացմանն ու միջազգային ճանաչմանը:

Գիտական հանրույթը ունակ է և պետք է ցույց տա հետազոտական ու գիտագործնական համոզիչ արդյունքներ, որոնք կարող են դրվել պատմաքաղաքական կարևոր որոշումների հիմքում: Հաշվի առնելով գիտության դիվանագիտության կարևորությունն ու հարաճուն դերը ժամանակակից աշխարհում ԱԵԳՄՄ-ն ի սկզբանե հանձն է առել երիտասարդության գիտական ներուժի բացահայտման, միջազգային գիտական կապերի ընդլայնման ու ճիշտ օգտագործման միջոցով զարգացնելու գիտության դիվանագիտության ինստիտուտն Արցախի Հանրապետությունում, որը պետք է անխզելիորեն կապված լինի երկրի արտաքին ու գիտատեխնիկական քաղաքականության, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման հետ:

Այնուհայտ է, որ ժամանակակից աշխարհում գիտության դերն արագորեն աճում է, գիտությունը ներթափանցում է ամենուր՝ ազդելով ցանկացած տեսակի գործունեության, այդ թվում՝ տվյալ երկրի ներքին և արտաքին քաղաքականության արդյունավետության վրա: Գիտությունն այսօր մեծ ազդեցություն ունի դիվանագիտության բնագավառում, ինչի արդյունքում լայնորեն քննարկվում է «գիտության դիվանագիտություն» հասկացությունը՝ որպես ժամանակակից միջազգային հարաբերությունների ֆենոմեն, որի շահակիցների շրջանակը գլոբալացման ազդեցությամբ անընդհատ ընդլայնվում է:

Արցախի գիտական ներուժը, գիտական կազմակերպություններն ու հիմնադրամները կարող են «փափուկ ուժի» դեր խաղալ՝ ի հակակշիռ Արցախյան հիմնախնդրի շուրջ այն կոշտ մոտեցումների, որոնք դեռ գերակշռում են միջազգային քաղաքականության մեջ: Պատահական չէ, որ ԱԵԳՄՄ-ի կողմից վերջերս հիմնադրված «ԱՐՑԱԽ» գիտահետազոտական ինստիտուտի ռազմավարության մեջ արդեն ամրագրվել է գիտության դիվանագիտության միջոցով Արցախի Հանրապետության ճանաչելիության բարձրացմանն ու միջազգային ճանաչմանը նպաստելու՝ հիմնադրամի գլխավոր առաքելությունը, ինչն, իհարկե, կազմակերպության գործունեության համար նոր հայեցակարգ չէ, պարզապես դրա կարևորությունը հընթացս աճել է: Ուսումնասիրելով ու տեղայնացնելով աշխարհի առաջատար ուղեղային կենտրոնների փորձը՝ Ինստիտուտը կիրականացնի կոնկրետ ռազմավարական խնդիրներ՝ պահպանելով հավասարակշռությունն ու արդյունավետ փոխներգործությունը գիտական ու դիվանագիտական քաղաքականության միջև:

Պետք է նկատել, որ Արցախի Հանրապետությունում առաջիկա հինգ տարիներին գիտության բնագավառում պետական մակարդակով նախատեսվող քայլերը, օրինակ լինելով, բավարար չեն և չեն ներառում այն արդիական մոտեցումները, որոնք ուղղակիորեն կապվում են գիտության դիվանագիտության ինստիտուտի նպատակային գործարկմանն ու զարգացման հետ: Այնինչ հատկապես չճանաչված երկրներում գիտությունը, միջազգային գիտական համագործակցության խթանումը կարող են ետպես ազդել դիվանագիտական հարաբերությունների կառուցման գործին:

Գիտության դիվանագիտությունը երկրների միջև գիտական փոխգործակցությունն է՝ մարդկության առջև ծառայած ընդհանուր խնդիրների լուծման, ինչպես նաև կառուցողական և գիտելիքի վրա հիմնված միջազգային գործընկերության ստեղծման համար: Դիվանագիտական հարաբերությունները չեն կարող և չպետք է առանձնացվեն գիտահետազոտական հայեցակարգերից ու պրակտիկայից: Միաժամանակ, միջազգային փոխհարաբերությունները կարող են ազդել գիտության դիվանագիտական առաքելությանը՝ գիտությունը վերածելով դիվանագիտության յուրատեսակ փոխարինողի կամ առաջատար օղակի: Դրանից գատ, գիտական պատրաստականությունն օգնում է կառավարությանն ու դիվանագետներին՝ նախապատրաստելու ու վարելու միջազգային կարևոր բանակցությունները: Տարբեր երկրներում իրականացվող միջազգային ձևաչափի գիտական ծրագրերը նպաստում են, որպեսզի շահակիցները շփվեն իրար հետ, փոխանակվեն գիտական տեղեկատվությամբ, նաև ծանոթանան տվյալ երկրի մշակույթին, գիտության ձեռքբերումներին:

2020թ. հունվարի 6-17-ը Հնդկաստանի մայրաքաղաք Դելիում մասնակցելով RIS ինստիտուտի կողմից կազմակերպված «Գիտության դիվանագիտություն» խորագրով միջազգային վերապատրաստման դասընթացին՝ հնարավորություն եմ ունեցել ծանոթանալու աշխարհի 23 երկրների ավելի քան 30 մասնակիցների հետ, տեղեկանալու նրանց երկրներում գիտության դիվանագիտության զարգացմանն ուղղված ռազմավարական քայլերին: Տպավորիչ էին Հնդկաստանում գիտության զարգացմանն ուղղվող ահռելի միջոցները (2020-2021թթ.-ի բյուջեից գիտությանը հատկացված գումարը կազմում է 800 մլն ԱՄՆ դոլար, իսկ Արցախի Հանրապետության 120 միլիարդանոց բյուջեից գիտությանը հատկացված է ընդամենը 38 միլիոն դրամ): Իհարկե, Հնդկաստանն ու Արցախը չենք դնում զուգակշիռների վրա, սակայն Արցախում գիտության զարգացման նպատակով պետական քաղաքականության արմատական վերանայման ու բարեփոխումների անհրաժեշտություն ենք տեսնում և՛ հայեցակարգային, և՛ ֆինանսական առումներով: Գիտության դիվանագիտության զարգացումը բերում է նաև տնտեսական զարգացման: Այս իմաստով Հնդկաստանն աշխարհի մի շարք երկրների գիտական խոշոր կենտրոնների հետ հաստատել է գործընկերային հարաբերություններ, իրականացնում է տարբեր նախագծեր՝ նաև դրանց շնորհիվ զարգացնելով տնտեսությունը:

Աշխարհի գիտնականներն ու դիվանագետները գնալով ավելի ու ավելի են միավորում ջանքերը՝ նոր գլոբալ մարտահրավերների ու սպառնալիքների հանդիման, որոնց այսօր անխուսափելիորեն բախվում է համաշխարհային հանրությունը: Գիտության դիվանագիտության կարևորությունը, որպես միջազգային խնդիրների լուծման միջոց, սկսել են ակտիվորեն քննարկել ոչ միայն ակադեմիական միջավայրի ներկայացուցիչները, այլև հենց պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները: Գիտության դիվանագիտության կարևորությունն այսօր մեծանում է, քանի որ ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներ, այնպես էլ մենք հասել ենք որոշակի դիվանագիտական փակուղու, ինչը հատկապես նկատելի է Արցախյան հակամարտության շուրջ բանակցություններում: Մի շարք հարցերի հետ կապված «անհամաձայնելի» տարաձայնությունները հանգեցրել են այն բանին, որ դաշնակիցների հետ քայլ առ քայլ վստահության ամրապնդումը կարող է կատարվել միայն «փափուկ ուժի» մեթոդներով: Հայկական դիվանագիտությունը փնտրում է իրավիճակից դուրս գալու ամենաարդյունավետ գործիքները, և այս առումով գիտության դիվանագիտությունն ունի լավագույն հեռանկարները:

Գիտնականների առաջադրումը՝ որպես միջազգային հարաբերությունների ամրապնդման դերակատարների՝ ունակ նպաստելու քաղաքական ճգնաժամի հաղթահարմանն ու միջպետական խնդիրների լուծմանը, ԱԵԳՄՄ-ի ռազմավարական նպատակներից մեկն է: Պատահական չէ Կազմակերպության կողմից 2019թ. «Արցախի

գիտության դեսպան»-ի ինստիտուտի հիմնումը՝ համանուն կոչումով ու մեդալով, ամենամյա միջազգային գիտաժողովների կազմակերպումն Արցախում՝ բավականին լայն աշխարհագրական ընդգրկմամբ, «Գիտական Արցախ» պարբերականի հիմնադրումը՝ աշխարհի շուրջ մեկ տասնյակ երկրները ներկայացնող խմբագրական խորհրդի կազմով, հրապարակումների միջազգային քարտեզով (շուրջ 15 երկիր), գիտական արդյունքների հանրայնացման ճկուն մեխանիզմներով և այլն:

Տարբեր երկրներում գիտական մշակույթի ձևավորման առանցքային բաղադրիչներ են գիտական ռեսուրսների փոխանակումը (կադրեր, սարքավորումներ, գիտական հետազոտությունների կազմակերպման փորձ և այլն), համատեղ գիտական նախագծերի իրականացումը, գիտական կապերի ընդլայնումը, որոնք նպաստում են տվյալ երկրների միջև հարաբերությունների զարգացմանը: Գիտության ու գիտական կադրերի բարձր շարժունությունը գիտության ինչպես այսօրվա, այնպես էլ վաղվա արդյունավետ զարգացման նախապայման է: Առավել քան համոզված ենք, որ որոշ երկրների միջև առկա փակուղիները կարող են հաղթահարվել նաև գիտության դիվանագիտության ներուժն օգտագործելով: Երկրների միջև գիտական համագործակցային կապերը ձևավորում ու զարգացնում են առաջին հերթին հենց գիտնականները, որոնք իրենց երկրներում հանդես են գալիս իբրև յուրատեսակ **ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՆԵՐ**:

Ահա թե ինչու գիտության դիվանագիտության պահանջարկն այսօր մեծանում է, ինչպես Սառը պատերազմի ժամանակ: Ինչու՞ երկրի համար օրհասական պահերին պետական գործիչներն ու քաղաքագետներն ակնկալում են գիտնականների աջակցությունը: Բանն այն է, որ գիտական աշխարհայացքով զինված մարդիկ ավելի լավ են հասկանում մարտահրավերների ու սպառնալիքների մասշտաբները: Երբ դիվանագետները, քաղաքագետները, գործարարները, բարձրաստիճան գինվորականները կորցնում են միմյանց հանդեպ վստահությունը, գիտնականների միջև հարաբերությունները հաճախ դառնում են միջպետական հարաբերությունների փրկօղակներ: Գիտնականների իրապես կարևոր դերը որոշվում է մի հանգամանքով. անկախ նրանից, թե երկրագնդի որ մասում են ապրում, ինչ ազգություն ունեն, նրանք միմյանց լավ են հասկանում, քանի որ ունեն միավորող սկզբունք՝ գիտության լեզու, ինչը օգնում է միջազգային խնդիրների լուծման գործում:

Մի բան պարզ է. մեթոդները, որոնք առաջարկում է գիտության դիվանագիտությունը և գործիքները, որոնք օգտագործում է, կարող են օգնել՝ լուծելու վիճելի ու կարևոր հարցեր: Բազմաթիվ օրինակներ ապացուցում են, որ գիտնականները նաև դիվանագետներ են և կարող են ազդել քաղաքականության, հետևաբար միջազգային հարաբերությունների արդյունավետ զարգացման վրա:

Ուզում ենք հավատացած լինել, որ գիտության դիվանագիտությունը կարող է մեծապես նպաստել աշխարհում խաղաղության հաստատման, ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների ձևավորման, Երկիր մոլորակի պահպանման ու կայուն զարգացման գործին:

ԱԵԳՄՄ-ի «Գիտական Արցախ» պարբերականը պիտի դառնա Արցախում գիտության դիվանագիտության զարգացման կարևոր հարթակներից մեկը, որ գիտությունն ի նպաստ դիվանագիտության ծառայեցնելով՝ աշխարհի կյուրապաշտական մոտեցումներին հակադրի իր հայրենի հողի իմաստությունից սնվող մարդուժի ու նրա գիտական կարելիությունների կարևորությունը, քանզի մարդն է, որ այդ կարելիությունները պիտի հունավորի ճիշտ կերպով՝ հօգուտ գերակա նպատակի՝ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման ու բարգավաճման:

ԱՎԵՏԻԲ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF SCIENCE DIPLOMACY IN THE REPUBLIC OF ARTSAKH

Science diplomacy occupies a central place and plays a key role in the activities of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA). It is no coincidence that the concept of «science diplomacy» has been actively applied in the public and scientific-educational life of our country namely due to the Organization's consistent efforts. Its tools have been successfully used in almost all projects and programs of the Organization, the purpose of which was to contribute to the development of science in Artsakh, increase the recognizability of Artsakh in the world and its international recognition.

The scientific community is able and should show high results in the research and scientific-practical sphere, and they can be the basis for important historical and political decisions. Given the importance and increasing role of science diplomacy in the modern world, UYSSA from its inception, sought to identify the scientific potential of youth, to expand international scientific relations and to contribute to the development of the Institute of science diplomacy in the Republic of Artsakh, which, in its turn, should be closely bound up with external and scientific-technical policy of the country as well as with the development of international cooperation.

It cannot be denied that in the modern world, the role of science is growing rapidly, science penetrates everywhere and has an impact on any activity, including the effectiveness of domestic and foreign policy of each country. Today, science has a great influence in the field of diplomacy, as a result of which the concept of «science diplomacy» is widely discussed, which is considered a phenomenon in modern international relations, and the circle of adherents of which is constantly expanding under the influence of globalization.

The scientific potential of Artsakh, its scientific organizations and foundations can assume the role of «soft power» in contrast to the hard approaches to the Artsakh problem that still dominate international politics. It is no coincidence that the strategy of the «ARTSAKH» Research Institute recently founded by UYSSA spelled out its main mission: to promote the recognizability of the Republic of Artsakh and its international recognition by means of science diplomacy, which is certainly not new in the concept of the Organization's activities; however, it should be noted that its importance has increased significantly. Therefore, by studying and mastering the experience of the world's leading think tanks, the Institute will solve specific strategic tasks, while maintaining a balance and effective interaction between science and diplomacy.

It should be noted that the steps planned at the state level for the next five years in the field of science in the Republic of Artsakh, being relevant, are still insufficient and do not contain modern approaches that are directly related to the targeted involvement and development of the institute of science diplomacy. Meanwhile, in unrecognized countries, science and the promotion of international scientific cooperation can have a significant impact on the establishment of diplomatic relations.

Science diplomacy means scientific cooperation between different countries in order to solve common problems facing humanity, as well as to form a constructive international partnership based on knowledge. Diplomatic relations cannot and should not be separated from research and practice. At the same time, international relations can affect the mission of science diplomacy, turning science into a kind of successor to diplomacy or its leading element. In addition, the scientific preparedness helps the government and diplomats prepare and conduct important international negotiations; international scientific programs implemented in different countries help the parties involved to communicate with each other, exchange scientific information, and get acquainted with the culture and scientific achievements of each country.

Taking part in the international training course on «Science Diplomacy» organized by the RIS Institute in Delhi, India, from January 6 to 17, 2020, I had the opportunity to meet more than 30 participants from 23 countries and learn about the strategic steps aimed at developing science diplomacy in their countries. The huge funds allocated by the government of India for the development of science were truly impressive: for the period 2020-2021, 800 million dollars were allocated from the budget for science, whereas in Artsakh only 38 million drams were allocated for the development of science from the budget of 120 billion drams for the same period. Of course, we do not draw parallels between India and Artsakh, but we would like to note that the development of science in Artsakh, both in terms of concepts and in terms of funding, requires a fundamental review and reform by the state. The development of science diplomacy leads strictly to economic development. In this regard, India has established partnerships with major research centers in a number of countries and is implementing various projects due to which its economy is developing.

Scientists and diplomats from all over the world are joining forces day after day to solve new global problems and threats that the world community is constantly facing. The importance of science diplomacy as a means of solving international problems is discussed not only by representatives of the academic environment, but also by representatives of government bodies. Today, the role of science diplomacy has also increased because many countries of the world, like us, have found themselves in a certain diplomatic impasse, which is especially evident on the example of negotiations on the solution of the Artsakh problem. «Insurmountable differences» related to a number of issues have led to the fact that gradual confidence-building with allies can only be achieved through «soft power» methods. At a time when Armenian diplomacy is looking for the most effective ways out of this situation, science diplomacy can have better prospects and provide effective assistance to it.

The promotion of scientists as participants in strengthening international relations, able to overcome the political crisis and solve interstate problems, is one of the strategic goals of the UYSSA. As a result, it is not accidental that in 2019 the Organization established the «**Artsakh Science Ambassador**» Institute, title and a medal with the same name; on behalf of UYSSA annual international conferences in Artsakh with a fairly wide geographical coverage are organized, the «Scientific Artsakh» journal is established, the editorial staff of which consists of scientists from more than a dozen countries, and the map of publications that stand out for their relevance and speed of response to events and phenomena in the world covers 15 countries.

The key components of forming the scientific culture of different countries are the exchange of scientific resources (human resources, equipment, experience in organizing scientific research, etc.), the implementation of joint scientific projects, and the expansion of scientific ties that contribute to the development of relations between these countries. High mobility of science and scientific HR is a prerequisite for effective development of science today and tomorrow. We are more than convinced that deadlocks in relations between some countries can be overcome by using the potential of science diplomacy. Relations between countries in the field of scientific cooperation are formed and developed primarily by scientists who are unique **SCIENCE AMBASSADORS** in their countries.

This is why the role of science diplomacy is growing today, just as it did during the Cold war. Why do statesmen and politicians expect the support of scientists in critical times for the country? The fact is that people with a scientific worldview better understand the scale of challenges and threats. When diplomats, politicians, businessmen, and high-ranking military personnel lose confidence in each other, the relationship between scientists often becomes vital for interstate relations. The really important role of scientists is determined by one circumstance: no matter what part of the world they live in, what nationality they are, they understand each other well, because they have a unifying principle – the language of science, which helps solve international problems.

One thing is clear: both the methods that science diplomacy offers and the tools that it uses can help resolve controversial and important issues. Many examples prove that scientists are the same diplomats who can influence politics and, consequently, the successful development of international relations.

I would like to believe that the science diplomacy can significantly contribute to the establishment of world peace, the formation of good-neighborly relations between peoples, the preservation of the planet Earth and sustainable development.

The UYSSA «Scientific Artsakh» journal by should become one of the important platforms for the development of science diplomacy in Artsakh, so that science, serving diplomacy, could counteract the materialistic worldview understanding of the importance of human strength and scientific capabilities, fed by the wisdom of their native land, since only such a person can correctly use his/her capabilities, serving the most important, priority goal: the international recognition and prosperity of the Republic of Artsakh.

AVETIK HARUTYUNYAN

РЕДАКЦИОННАЯ СТАТЬЯ

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ДИПЛОМАТИИ НАУКИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

В деятельности Объединения молодых учёных и специалистов Арцаха (ОМУСА) центральное место занимает и ключевую роль играет дипломатия науки: не случайно, что именно благодаря последовательным усилиям Организации в общественной и научно-образовательной жизни нашей страны появилось и стало активно применяться понятие «дипломатия науки». Инструментарий последней успешно использовался почти во всех проектах и программах Организации, целью которых стало содействие развитию науки в Арцахе, повышению узнаваемости Арцаха в мире и его международному признанию.

Научное сообщество способно и должно показать высокие результаты в исследовательской и научно-практической сфере, и они могут быть заложены в основу важных историко-политических решений. Учитывая важность и возрастающую роль дипломатии науки в современном мире, ОМУСА с самого начала своей деятельности стремилась выявить научный потенциал молодежи, расширить международные научные связи и с их помощью способствовать развитию института дипломатии науки в Республике Арцах, который, в свою очередь, должен быть неразрывно связан с внешней и научно-технической политикой страны, в том числе и с развитием международного сотрудничества.

Нельзя отрицать, что в современном мире роль науки быстро растёт, наука проникает повсюду и оказывает влияние на любую деятельность, в том числе на эффективность внутренней и внешней политики каждой страны. Сегодня наука имеет большое влияние в сфере дипломатии, в результате чего широко обсуждается понятие «дипломатия науки», которое в современных международных отношениях рассматривается как феномен, и круг приверженцев которого под влиянием глобализации постоянно расширяется.

Научный потенциал Арцаха, его научные организации и фонды могут взять на себя роль «мягкой силы» в противовес тем жестким подходам к Арцахской проблеме, которые еще доминируют в международной политике. Неслучайно, что в стратегии основанного

недавно ОМУСА Научно-исследовательского института «АРЦАХ» прописана его главная миссия: содействовать повышению узнаваемости Республики Арцах и его международному признанию посредством дипломатии науки, что, безусловно, не является новым в концепции деятельности организации; однако следует отметить, что ее важность значительно возросла. Поэтому, изучая и осваивая опыт ведущих мировых мозговых центров, Институт будет решать конкретные стратегические задачи, сохраняя при этом баланс и эффективное взаимодействие между наукой и дипломатией.

Следует отметить, что шаги, намеченные на государственном уровне на ближайшие пять лет в сфере науки в Республике Арцах, являясь актуальными, все же недостаточны и не содержат современные подходы, которые напрямую связаны с целевым задействованием и развитием института дипломатии науки. Между тем в непризнанных странах наука, стимулирование международного научного сотрудничества могут оказать существенное влияние в деле установления дипломатических отношений.

Дипломатия науки – это научное сотрудничество между разными странами для решения общих задач, стоящих перед человечеством, а также для формирования конструктивного международного партнерства, основанного на знании. Дипломатические отношения не могут и не должны отделяться от научно-исследовательской деятельности и практики. В то же время, международные взаимоотношения могут повлиять на миссию дипломатии науки, превратив науку в своего рода преемника дипломатии или ее лидирующего звена. Кроме того, научная подготовленность помогает правительству и дипломатам готовить и вести важные международные переговоры; научные программы международного формата, осуществляемые в разных странах, способствуют тому, чтобы вовлеченные стороны общались друг с другом, обменивались научной информацией, а также знакомились с культурой и достижениями науки каждой страны.

Участвуя с 6 по 17 января 2020 г. в организованных Институтом RIS международных курсах переподготовки по теме «Дипломатия науки» в столице Индии Дели, я имел возможность познакомиться с более чем 30 участниками из 23 стран мира, узнать о стратегических шагах, направленных на развитие дипломатии науки в их странах. Огромные средства, выделенные правительством Индии на развитие науки, было поистине впечатляющими: на период 2020-2021 года из бюджета на науку было выделено 800 мл. долларов, тогда как в Арцахе из бюджета в 120 млрд. драммов на развитие науки в этот же период было выделено всего 38 млн. драммов. Конечно, мы не проводим параллелей между Индией и Арцахом, но хотим заметить, что развитие науки в Арцахе и с концептуальной точки зрения, и с точки зрения финансирования, требует коренного пересмотра и реформирования со стороны государства. Развитие дипломатии науки неукоснительно ведет и к экономическому развитию. В этом аспекте Индия установила партнерские отношения с крупными научными центрами ряда стран и реализует различные проекты, благодаря которым развивается ее экономика.

Ученые и дипломаты всего мира изо дня в день объединяют свои усилия для решения новых глобальных проблем и угроз, с которыми мировое сообщество постоянно сталкивается. О важности дипломатии науки как средства решения международных проблем говорят не только представители академической среды, но и представители органов государственного управления. Сегодня роль дипломатии науки возросла еще и потому, что многие страны мира, также, как и мы, оказались в определенном дипломатическом тупике, что особенно видно на примере переговоров по решению Арцахской проблемы. Связанные с рядом вопросов «непреодолимые разногласия» привели к тому, что постепенное укрепление доверия с союзниками может быть достигнуто только с помощью методов «мягкой силы». В условиях, когда армянская дипломатия ищет наиболее эффективные способы выхода из этой ситуации, дипломатия науки может иметь лучшие перспективы и оказать ей эффективную помощь.

Выдвижение ученых в качестве участников укрепления международных отношений, способных преодолеть политический кризис и решить межгосударственные проблемы, является одной из стратегических целей ОМУСА. Как следствие, не случайным является то, что в 2019 году Организацией были учреждены институт «Посол науки Арцах», звание и медаль с таким же названием, организуются ежегодные международные конференции в Арцахе с довольно широким географическим охватом, учреждено периодическое издание «Научный Арцах», в редакции которого состоят ученые из более чем десятка государств, а карта публикаций, отличающихся актуальностью и быстротой реагирования на события и явления в мире, охватывает 15 стран.

Ключевыми составляющими формирования научной культуры разных стран являются обмен научными ресурсами (кадры, оборудование, опыт организации научных исследований и т. д.), реализация совместных научных проектов, расширение научных связей, которые способствуют развитию отношений между этими странами. Высокая мобильность науки и научных кадров является предпосылкой эффективного развития науки сегодня и завтра. Мы более чем убеждены, что тупиковые ситуации в отношениях между некоторыми странами можно преодолеть, используя потенциал дипломатии науки. Отношения между странами в области научного сотрудничества формируются и развиваются в первую очередь учеными, которые являются уникальными **ПОСЛАМИ НАУКИ** в своих странах.

Вот почему роль дипломатии науки сегодня растет также, как это было во времена Холодной войны. Почему же государственные деятели и политики ожидают поддержки ученых в критические для страны времена? Дело в том, что люди с научным мировоззрением лучше понимают масштабы вызовов и угроз. Когда дипломаты, политики, бизнесмены, высокопоставленные военные теряют доверие друг к другу, отношения между учеными часто становятся жизненно важными для межгосударственных отношений. Действительно важная роль ученых определяется одним обстоятельством: независимо от того, в какой части планеты они живут, какой они национальности, они хорошо понимают друг друга, потому что у них есть объединяющее начало – язык науки, который помогает решать международные проблемы.

Ясно одно: и методы, которые предлагает дипломатия науки, и инструменты, которые она использует, могут помочь в решении спорных и важных вопросов. Множество примеров доказывают, что ученые - те же дипломаты, которые могут влиять на политику и, следовательно, на успешное развитие международных отношений.

Хочется верить, что дипломатия науки может в значительной степени способствовать установлению мира во всем мире, формированию добрососедских отношений между народами, сохранению планеты Земля и устойчивому развитию.

Журнал ОМУСА «Научный Арцах» должен стать одной из важных платформ для развития дипломатии науки в Арцахе, чтобы, наука, служа дипломатии, смогла противопоставить материалистическому мировоззрению понимание важности силы человека и его научных возможностей, питающихся мудростью родной земли, поскольку именно такой человек может верно использовать свои возможности, служа самой главной, приоритетной цели: международного признания и процветания Республики Арцах.

АВЕТИК АРУТЮНЯН